

Ա. Ի. ԿԻԿՈՅԻՆԱ

# ՀԱՅԻ ԺԱՆԴԱՆԻ

ՅԵՎ

ՊԱՅՔԱՐ ՆՐԱ ԴԵՄ



632.3  
5-47

Ա.ԶՈՎ - ՍԵՎ. ԽՈՎ. ՑՈՒ. ՅԵՐԿՐՈ. ՑԻՒ. ՀՐԱ. ՏԱՐԱ. ԿՉՈՒԹ. ՑՈՒ. 1935

632.3

4-47

այ

ԿԻԿՈՅԻՆԱ

AUG 2010

ՀԱՅԻ ԺԱՎ  
ՅԱՅՔԱՐ ԿՐԱ ԴԵՄ

Թալիմ. Շվերդ

1935  
ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎԱԶՍԻ ՅԵՐԿՐԱՑԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՈՈՍՏՈՎ-ԴՈՒ

20 MAY 200

17860



3288  
Ա

### ՆԱԽԱԲԱՆ

Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման խնդիրը և կայուն բերք ստեղծելը, վոր առաջարկեց կուսակցության 17-րդ համագումարը յերկրորդ հնդամյակի համար, անխզելի կերպով կապված ե կուլտուրական բույսերի վնասառուների հասցրած փամփամները և հիվանդությունները վերացնելու խնդրին:

Յեթե առաջ մանր բաժան-բաժան յեղած գյուղական տնտեսությունների պայմաններում անկարելի յեր համաշափ, սիստեմատիկ, խստորեն գիտական տվյալների վրա հիմնված պայքար տանել այդ ժակարուճների դեմ, ապա այժմ, կոլխոզների ու սովորությունների խոշոր սոցիալիստական տնտեսության պայմաններում այդ պայքարը տանելու համար բոլոր տվյալները կան: Պլանային սոցիալիստական տնտեսության մեջ բերքի քանակն ու վորակը չեն կարող կախում ունենալ մակարույնների մասսայական զարգացումից, վորոնք ահազին վնաս են տալիս և հենց դրանով թուլացնում են կոլխոզների ու սովորությունների, կազմակերպչական-տնտեսական աճումը: Դրա համար ել մեր հիմնական

խնդիրներից մեկը համարվում է գյուղատնտեսական կուլտուրայի բերքի լրիվ պահպանումը վասառուներից և հիվանդություններից, իսկ դա հնարավոր է միայն խորը կերպով նրանց ուսումնասիրելով և համաշափ պայքար մղելով նրանց դեմ գիտական տվյալների հիմնան վրա։ Հենց դա յեներկա գրքույկի նպատակը, վորտեղ խոսվում են այն մասին, թե ինչ բան է ժանգը և ինչպես պայքարել հացաբույսերի այդ ամենավտանգավոր հիվանդության դեմ։

## ԻՆՉ ԲԱՆ Ե ԿԱՑԱԲՈՒՅՍԵՐԻ ԺԱՆԳԸ

Ամառն ամեն մեկը գտնվելով դաշտում, տեսած կլինի ցորենի, հաճարի, գարու և վարսակի կանաչ բույսերի վրա դեղին փոշու շերտ։ Այդ շերտն առանձնապես ուժեղանում է հացաբույսերի հատունայումից առաջ։ Յեթե ավելի մոտիկից դիտենք, ապա կարելի յենկատել, զոր նա ծածկում է բույսերը մանր բծերով, ուռուցիկ և տափակ բարձիկների ձեռվ կամ շերտերով։ Դա հենց մակաբույծ սունկն է, զոր կոչվում է ժանգ։ Գարնանը (ապրիլին-մայիսին) ժանգի բարձիկներն ունեն դեղնավուն կամ աղյուսի գույն, իսկ հացաբույսերի հասունացման վերջում նրանք սեփանում են և գառնում թուխ գույնի, ապա մութդարչնագույն կամ սև։ Այդ բարձիկները կամ շերտերը, զոր տեղափորված են տերևների և ցողունների վրա, հազվագյուտ դեպքերում քիստերի ու հասկերի վրա— հենց ժանգի մանրագույն սաղմիկների մասսայական կուտակումն են։ Ժանգի սաղմիկները, չնորհիվ նրան, զոր չափազանց մանր են, յերեսում են միայն մանրագիտակի տակ, շատ հեշտությամբ և արագությամբ քամիները տեղափոխում են նրանց հեռավոր տարածությունների վրա, վարակելով նորանոր բույ-

սեր: Այդպիսով ժանգն արագորեն տարածվում ե և  
մեծ վնասներ ե հասցնում ցանքսերին:

Ժանգի սաղմերն ընկնելով բույսերի կանաչ մա-  
սերի վրա՝ նրանց զարգացման համար նպաստավոր  
պայմաններում աճում են և կազմում մնակարմատ-  
ներ, վորոնք թափանցում են բույսերի ներսը, խլում  
են նրանցից սննդարար նյութերը և քայլայում են  
նրանց: Այդ առնչությամբ խանգարվում ե բույսերի  
սնունդը, շնչառությունը, իսկ բացի այդ ժանգի վնա-  
սած տեղերից բույսերը շատ խոնավություն են կորց-  
նում: Դրանից բույսերը թուլանում են և դալկանում:  
Ժանգ դիպած ցանքսերը տալիս են վտիտ և թեթև  
հատիկ և հասկերի վրա ավելի քիչ քանակությամբ  
են հատիկ ունենում, մի բան, վոր պակասեցնում ե  
բերքը:

Կան ժանգի մի քանի տեսակներ:

Իր վնասատվությամբ առաջին տեղը բռնում ե  
ցորենի ցողունի և վարսակի թագանման ժանգը, նրա-  
նից հետո գալիս ե ցորենի թուլի ժանգը: Ժանգի  
մնացած տեսակները տնտեսական պակաս նշանակու-  
թյուն ունեն: Գիտական-հետախուզական կազմակեր-  
պությունների և տեղերում աշխատողների տվյալների  
համաձայն, բերքի կորուստը ժանգից վորոշվում ե  
հետևյալ չափով.

Ցողունի ժանգն իր մասսայական զարգացման  
տարիներում (որինակ 1933 թվին) Հյուսիսային Կով-  
կասի հարավային և հարավ-արևելյան մասում իջեց-  
րեց բերքը մինչև 80—90 տոկոս, իսկ ավելի չափա-  
վոր զարգացման տարիներում նրա պատճառած կո-  
րուստները միջին թվով համար են մինչև 40—50  
տոկոս: Բերքի այդպիսի կորուստ նկատված ե Կու-  
բանում և Աղով-Սևածովյան յերկրամասի մյուս տե-

ղերում: Ներկայումս մենք դեռ ճիշտ տվյալներ չու-  
նենք ժանգի պատճառած ընդհանուր կորուստների  
հաշվառման վերաբերյալ բայց նրանք անշուշտ մեծ  
են: Այսպես որինակ, միայն Գեորգիյեվսկի սայոնում  
ցորենի բերքը թերահավաքումը 1933 թվին կազմում  
եր 176 հազար ցենտներ հացահատիկ:

Տերևի թուլի ժանգն իր ուժեղ զարգացման տա-  
րիներում (որինակ, 1933 թվին), բերքը պակասեցնում  
է մինչև 50 տոկոս, իսկ մի քանի տարիների միջին  
հաշվով 15—20 տոկոս:

Վարսակի թագանման ժանգը շատ հաճախ իջեց-  
նում ե նրա բերքը մինչև 50 տոկոս և ավելի:

Ժանգով վարսակված ցանքսերը սաստիկ պակասեց-  
նում են հատիկի բացարձակ քաշը (հազար հատիկի  
քաշը), տալիս են վտիտ և թեթև հատիկ: Թե ինչքան  
շատ ե պակասում բերքը, յերևում ե նրանից, վոր  
ցողունի ժանգն իր խիստ զարգացման տարիներում  
հատիկի բացարձակ քաշը պակասեցնում է 60—80  
տոկոս, վարսակի թագանման ժանգը ուժեղ վարա-  
կելու գեպքում՝ 50—60 տոկոս և բացի այդ ավե-  
լացնում ե նրա ճարճքածությունը 2—3 անգամ:

Հատիկի բացարձակ քաշի պակասումը տերևային  
մյուս ժանգերից զգալու որեն քիչ ե և չի անցնում 25  
տոկոսից: Այդ պատճառով նրանցից ստացված վնասն  
ավելի պակաս ե աչքի ընկնում: Ցորենի թուլի ժանգի  
ազդեցությունը նրա բերքի վրա կախված ե վարակ-  
ման աստիճանից և նրանից, թե ցորենի զարգացման  
վոր շրջանից ե սկսվում վարակումը: Այսպես ամերի-  
կական ուսումնասիրողների աշխատանքներից հայտնի  
յե, վոր ցորենի թփավորման շրջանից նրա ուժեղ  
վարակման գեպքում բերքը պակասում է մինչև 97,4  
տոկոս, հասկավորվելու հենց նախորյակին ուժեղ վա-

բակվելու դեպքում բերքը պակասում ե մինչև չ' թշտոկոս և ծաղկման շրջանում ուժեղ վարակվելու դեպքում բերքը պակասում ե 24—33 տոկոս։ Այն դեպքում, յերբ տերեւի ժանգը զարգանում ե ցանքսի սկզբնական զարգացման շրջանում, բերքը պակասում ե հասկերի հատիկների քանակի պակասեցման հաշվին։

## ԻՆՉ ՏԵՍԱԿ ԵՆ ԼԻՆՈՒՄ ԺԱՆԳԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՈՎ ԵՆ ՆՐԱՆՔ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ

Տարբերում են ժանգի մի քանի տեսակներ։

1. Ցողունի կամ գծային ժանգ, փորը զարգանում ե ցորենի, հաճարի, գարու և վարսակի վրա (տեսաղյուսակը)։

2. Տերեւի թուխ ժանգ՝ ցորենի և հաճարի վրա։

3. Թագանման ժանգ՝ վարսակի վրա։

4. Թղուկ ժանգ՝ գարու վրա։

5. Դեղին ժանգ՝ ցորենի, հաճարի և գարու վրա։


Կուլտուրաների անունը	Տերեւի թուխ ժանգ	Ցողունի ժանգ	Թագանման ժանգ	Դեղին ժանգ	Թղուկ ժանգ
Ցորեն . . .	+	+	—	+	—
Հաճար . . .	+	+	—	+	—
Գարի . . .	—	+	—	+	+
Վարսակ . . .	—	+	+	—	—

Ժանգի յուրաքանչյուր տեսակը զարգանում ե միայն վերեւում ցույց տված կուլտուրաների վրա, փորոնք աղյուսակում նշանակված են խաչով։


Ժանգը զարգանում ե և մնասում հայտնատի-

կային կուլտուրաներին նրանց աճման ամբողջ շրջանում։ Մի քանի կուլտուրաներ վնասվում են ժանգի մի քանի տեսակներից։ Որինակ, ցորենի վրա կարող են լինել ցողունի թուխ և դեղին ժանգերը։ Դրա համար հարկավոր ե իմանալ ժանգի ամեն մի տեսակի արտաքին նկարագրությունը, վորպեսզի իր ժամանակին յերևան բերվի ցանքսի վրա և կարելի լինի տարբերել ժանգի մի տեսակը մյուսից։ Ժանգի տեսակներն արտաքին նշաններով տարբերելը դժվար չե։ Միայն պետք ե լավ հիշել թե ինչպիսի կուլտուրաների վրա զարգանում ե այս կամ այն ժանգը, բույսի վոր մասերն ե մնասում և նրա սաղմաբեր բարձիկների արտաքին տեսքը։ Ինչպես մենք արդեն նկատեցինք, ցորենի ժանգը զարգանում ե չորս կուլտուրաների վրա — ցորեն, վարսակ, գարի, հաճար և բացի այդ կարող ե մնասել մի քանի վայրի հացաբույսեր (սեղ, վայրի վարսակ և այլն)։ Արտաքին նշաններով այդ ժանգը վոչնչով չի տարբերվում այդ բոլոր բույսերի վրա, բայց մի բույսից մյուսին չի կարող անցնել։ Դա բացատրվում ե նրանով, վոր ցողունի ժանգն իր հերթին բաժանվում ե յենթատեսակների (բնախոսական ձեռքի), վորոնք կարող են զարգանալ միայն վորոշ բույսի վրա, չանցնելով մյուսին։ Այսպես որինակ, ցողունի ժանգի մի ձեր զարգանում ե մլայն ցորենի վրա (ցորնացողնային ժանգ), մյուսը — միայն վարսակի վրա (վարսակացողնային ժանգ) և այլն։

Ցողունի ժանգը մնասում է զլիավորապես ցողունը, ավելի քիչ դեպքում քիմատերը, և հասկը, իսկ յերբեմն ել մնասում է տերեւները։ Բույսերի վնասված տեղերում գոյանում են նեղ, յերկարավուն, փոշիացվող շերտեր, քիչ ուսուցիկ (բարձիկներ) ժանգի գույնի։ Հետագայում այդ բարձիկները միանում են,



Նկ. 1. Ցորենի ցողունն ու հասկը, վնասված ցողնային կամ գծային ժանողվ, ա — ցողնային ժանղի ամառային սաղմիկները, բ — ցողնային ժանղի ձմեռային սաղմիկները:



Նկ. 2. Վարսակի թագածե ժանղը, ա — ամառային սաղմիկների բորձակները վարսակի տերեկի վրա. բ — վարսակի թագածե ժանղի ձմեռային սաղմիկների բարձիկները. շ — թագածե ժանղի ամառային սաղմիկները. շ — վարսակի թագածե ժանղի ձմեռային սաղմիկները:

միասին կազմում են յերկար շերտեր,  
դրա համար ել ցողունի ժանգը կոչվում  
է նույնպես գծային։ Հասունացող հա-  
ցաբույսերի վրա բարձիկները սևա-  
նում են։

Ցողնային ժանգի հակառակ մյուս  
տեսակները վնասում են միայն տերե-  
ները։


Վարսակի թափանման ժանգը զար-  
գանում է միայն տերեների վրա և նրանց  
պատյաններում։ Վնասված տեղում հայտ  
նվում են խոշոր յերկարավուն բարձիկ-  
ներ, պայծառ — ղեղնավուն գույնի։ Հա-  
սունացումից առաջ բարձիկները սևա-  
նում են և թեթևակի փայլում։ Ժանգի  
այդ տեսակը վնասում է միայն փար-  
սակին և մյուս հացահատիկներին չի  
անցնում։

Ցորենատերենվի թուխ ժանգը զար-  
գանում է միայն տերեների վրա և ինչ-  
պես թափանման ժանգը, բարձիկներ  
և կազմում, միայն ավելի փոքր և բաց  
գույնի։ Ցորենի հասունացումից առաջ  
այդ բարձիկները սեվանում են և դառ-  
նում մոռթ-դարչնագույն։ Այդ ժանգը  
վնասում է միայն ցորենին։

Հանարի Տերենվի թուխ ժանգն ար-  
տաքին նշաններով նման է ցորնատե-  
րենի թուխ ժանգին։

Նկ. 3. Ցորենի տերեները, վնասված զորք  
ժանգից, ամառային սաղմիկների բարձիկ-  
ները, ձմեռային սաղմիկների բարձիկներ։

Գարու թզուկ



Նկ. 4. Ցողնային ժանգի զարգացման սխեման. α — ծորենու տերեներն  
ու պատուղները ցողնային ժանգի զալնանային սաղմիկների բարձիկնե-  
րով. δ — ժանգի զալնանային սաղմիկը. ε — աճած զարնան սաղմիկը  
ցորնացողի վրա. ց — ամառային սաղմիկների ցոյցաց բարձիկները.  
օ — ձմեռային սաղմիկների բարձիկը (ցորենի հասունացման շրջանում).  
σ — ամառային սաղմիկը (փորն ամառը վարակում է միայն ցորենը). ալ —  
ձմեռային սաղմիկը (աշնանը և ձմռանը ձմեռում են խոզանում). Յ —  
աճ ձմեռային սաղմիկները, վորոնք ձմեռն ընկնում են ցորենու վրա  
և զարնանային սաղմիկների նոր բարձեր են կազմում։

ժանգը նույնպես չի տարբերվում հաճարի և ցորենի վերջին յերկու ժանգերից, միայն թե նրա բարձերն ավելի մանր են, վորոնք տալիս են նրան ավելի կլոր ձև։ Այդ տեսակը վասում ե միայն գարու տերևները։

Հացարույսերի դեղին ժանգը վասում ե ցորենին, հաճարին, գարուն, կազմելով տերևների վրա կիտրոնագույն մանր բարձիկներ, վորոնք հակառակ ժանգի մյուս տեսակների քիչ թե շատ կանոնավոր շարքով դասավորվում են տերևների ջղերի միջև։ Այդ ժանգն անշան չափով ե տարածված։

## ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ՅԵՎ ՏԱՐԱԾՎՈՒՄ ԺԱՆԳԵ

Ժանգն իր զարգացման ընթացքում ունի մի առանձնահատկություն, վորով նա տարբերվում է մյուս մակաբույծային սնկերից։ Այդ առանձնահատկությունն այն է, վոր ժանգը յերկտնային է, այսինքն նրա ամբողջ զարգացումն ընթանում է վոչ թե մի բույսի վրա, այլ յերկու բույսի, վորոնցից մեկը հացաբույսն է, իսկ մյուսը նրանց միանգամայն տարբեր վայրի բույսերից մեկը։ Այդ բանն որինակով պարզելու համար հետևենք ցողունի ժանգի զարգացմանը։ Ցողունի ժանգն ունի սաղմիկների յերեք տիպ կամ պտղաբերության յերեք տիպ։ զարնանային (Եցիդիտոսաղմիկներ), ամառային (ուրեղոսաղմիկներ) և ձմեռային (տելեյտոսաղմիկներ)։ Գարնանային սաղմիկները զարգանում են միայն ծորենու (բարբարիսի) վրա, վորտեղից քամին տարածում ե նրանց և զցում հացաբույսերի ցողուններին, վորտեղ միջին հաշվով 10-12 որից հետո յերեսում են ժանգի գույնի բարձիկներ, վորոնք տալիս են ամառային սաղմիկներ (ուրեղոսաղմիկներ)։

Գոյացած ամառային սաղմիկներն իրենց հերթին վարակում են հացաբույսերը, կազմելով նույն ամառային սաղմիկների նոր սաղմիկներ։ Այդպիսով մինչև հացաբույսերի հասունացումը զարգանում են ժանգի մի քանի սերունդներ, դրանով ել բացատրվում է



Նկ. 5. Սովորական ծորենու տերևներն ու պտուղները ցողնաժանգի դարնային շրջանում։

ժանգի արագ տարածումը ցանքսերի վրա, հատկապես նրա զարգացման նպաստավոր պայմաններում։

Հացաբույսերի հասունացման վերջում ժանգի ամառային սաղմիկների վոխարեն զարգանում են ձմեռային սաղմիկները մութ գույնի, դրանից ել հենց բարձիկի գույնը դարձնագույնից դարձնում ե մութ դարձնագույն կամ սև։ Յեկ այդպես, զարնանային սաղմիկ-

ները, բացի նրանից, վոր զարգանում են միանգամայն ուրիշ բույսի՝ այն ե — ծորենու վրա, հանդիսանում են հացաբույսերի վարակման աղբյուր զարնանային շըրջանում (վորտեղից և ստացել են գարնանային սաղմիկներ անունը): Ամառային սաղմիկները, ինչպես ինքն անունն ե ցույց տալիս, զարգանում են միայն



Նկ. 6. Լուծող մամխու տերևները վարսակի թափաձե ժանգի զարնանային շըրջանում:

ամառը հացաբույսերի վրա: Յեկ վերջապես ձմեռային սաղմիկները (տելեյտոսաղմիկներ) հանդիսանում են սնկերի զարգացման վերջին շըրջանը և շնորհիվ նրանց առանձին հարմարվողության, ձառայում են ցողունի ժանգի ձմեռման համար: Գարնան տաք և խոնավ յեղանակներ սկսվելով այդ ձմեռային սաղմիկները, վոր մնացել եյին ցողնատակերի վրա դաշտում, աճում և կազմում են մասր կրկնակի սաղմիկներ, վորոնք կա-

րող են զարգանալ միայն ծորենու վրա, վորտեղ և հանդեռ են գալիս զարնանային սաղմիկները: Փանգի հետագա զարգացումը կրկնվում է վերևում ցույց տված կարգով:

Սիստեմատիկորեն ժանգի զարգացման ամբողջ շըրջանը պատկերանում է հետեւյալ կերպ:

Գարնանային սաղմիկներ (զարնանը ծորենու վրա), ամառային սաղմիկներ (ամառը մի քանի սերունդ, հացաբույսերի վրա), ձմեռային սաղմիկներ (հացաբույսերի վրա նրանց հասունացման վերջում և ծորենու վրա նրա ձմեռելու շըրջանում) և գարնանը — դարձյալ գարնանային սաղմիկներ:

Սաղմիկների զարգացման այլպիսի հերթականություն ունեն և ժանգի մնացած տեսակները, վորոնց ամառային և ձմեռային սաղմիկները զարգանում են հացաբույսերի վրա, իսկ գարնանային շըրջանը մյուս բույսերի վրա, նույնպես վայրի տեսակներից: Միայն թե այդ վայրի բույսերը ժանգի առանձին տեսակների համար տարբեր են. վարսակի թագանման ժանգի զարնանային շըրջանը հանդեռ ե գալիս լուծողական մամխու վրա. տերեկի թուխ ժանգինը — միայն տերեփուկի վրա, հաճարի տերեկի թուխ ժանգինը կորածաղիկ (կրիվոցվետ) և կարմրածաղիկ (ոռոմյանկա) դեղաբույսի վրա և զարու թզուկ ժանգինը — սեղմացողնիկի վրա: Բայց հացաբույսերի ժանգի բոլոր տեսակները կարիք են զգում իրենց բոլոր շըրջանների լրիվ գարգացմանը: Ցողնային և թագանման ժանգերն իրենց զարգացման համար պետք ե անպայման անցնեն սաղմիկների ձևավորման բոլոր յերեք շըրջանները: Այլ խոսքով ժանգի այդ տեսակները չեն կարող զարգանալ հացաբույսերի վրա, իրենց միջանկյալ բույսերի բացակայության դեպքում, այսինքն ցողնացողնային

Ժանգն առանց ծորենու և վարսակի թագանման ժանգը — առանց լուծողական մամիու։ Դրա համար ել հենց այդ բույսերի վոչնչացումը հանդիսանում ե նպատակահարմար և պայքարի ավելի հասրակ միջոց այդ ժանգի դեմ։ Ժանգի մյուս տեսակների համար միջանկյալ բույսերը յերկրորդական նշանակություն ունեն, քանի վոր ժանգի այդ տեսակները կարող են զարգանալ և սաղմիկների զարգացման առանց գարնանային շրջանի։ Բացի այդ, ձմեռային սաղմիկների հետ միասին այդ ժանգը անցնում ե յեկող տարվան և ամառային սաղմիկներով։ Դրա համար ժանգի այդ տերևային տեսակների գարնանային վերականգման հիմնական աղբյուրները հանդիսանում են վոչ թե միջանկյալ բույսերը (տերեփուկը, կորածաղիկը, կարմրածաղիկը և այլն), այլ ամառային սաղմիկները։ Ժանգի տերևային տեսակները վնասված ըերբի մնացորդների վրա գտնված ամառային սաղմիկներով վարակում են լնկած հատիկները, վորտեղից նպաստավոր պայմաններում ժանգն անցնում ե աշնանացանքների ծիլերի վրա, վորտեղ սունկը ձմեռում ե տերևների հյուսվածքի ներսում կամ արդեն յերևացող սաղմագոր բարձիկների ձևով։

Դրանով ել բացատրվում ե տերեփի ժանգի վաղ հայտնվելը աշնանացանքսի վրա և այնուհետեւ նրա հետագա զարգացումը թե աշնանացան և թե նույն տեսակ զարնանացան հացարույսերի վրա։

Այդպիսով ժանգի տերևային տեսակները զարգանում են առանց միջանկյալ բույսերի և սնկի գարնային շրջանի։ Բայց դա յերբեք չի նշանակում, թե միջանկյալ բույսերը ժանգի տերևային տեսակների զարգացման գործում վոչ մի դեր չեն խաղում։ Այդպիսի հայացքը միանգամայն սխալ ե։ Միջանկյալ

բույսերի մեծ մասն ուժեղացնում ե ժանգի զարգացումը, նույնպես և նպաստում ե նրա մասնագիտացված նոր տեսակների առաջացմանը միևնույն կուլտուրայի սահմաններում։

Գիտնական աշխատանքներով պարզված ե, վոր ժանգի մի տեսակը վոչ միայն ունի վորոշ կուլտուրայի խստորեն հարմարեցրած մի քանի ձեեր, այլ այդ ձեն ինքը կարող ե բաժանվել ավելի մասնագիտացած ձեերի, վորոնք կարող են վսասել միայն վորոշ տեսակները։ Յերբեմն ժանգի մի ձեկի հանդեպ ավելի կայուն տեսակը կարող ե վսասվել միջանկյալ բույսի վրա ժանգի նոր առաջացած ձեից։

## Խ2 ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ԺԱՆԳԸ

Ժանգի համար, ինչպես և մույս սունկերի համար նրանց զարգացումը կարգավորող հիմնական պայմանը հանդիսանում են ջերմությունը և խոնավությունը։ Թե ինչքան ե ազդեցություն կրում ժանգը խոնավության և ջերմության պայմաններից, յերևում ե հետեւյալ տվյալներից։

Հացարտերի տերևային ժանգի և վարսակի թագանման ժանգի ձմեռային սաղմիկներն իրենց աճման համար գարնանը պահանջում են բարձր խոնավություն և վոչ պակաս, քան ջերմության 10 աստիճան, ըստ Յելսիուսի։ Ավելի լավ և արագ աճումը տեղի յե ունենում մոտ Յելսիուսի 18—20 աստիճան ջերմության դեպքում, այդ ջերմության ժամանակ հեշտությամբ վարակվում են և ծորենու տերևները։ Հացարույսերն ավելի ուժեղ կերպով վարակվում են ժանգի զարնանային սաղմիկներով 17—18 աստիճան ջերմության ժամանակ, ավելի բարձր ջերմու-

թյան դեպքում պակաս են վարակվում և 26 աստիճանից բարձր լինելու դեպքում վարակում յերբեք տեղի չի ունենում: Ամառային սաղմիկների զարգացումը տեղի յե ունենում 19—20 աստիճան ջերմության դեպքում: 30 աստիճանից բարձր և 10 աստիճանից ցածր ջերմության դեպքում սաղմիկներ չեն աճում: Վարսակի թագանման ժանդի ամառային սաղմիկների աճումը տեղի յե ունենում 18 աստիճանի ժամանակ և գաղարում ե, յերբ ջերմությունն իջնում ե մինչև 7 աստիճան: Զերմության վերոհիշյալ սահմաններում զարգանում են և ժանդի մյուս տեսակները: Ինչպես սաղմիկների աճումը, այնպես ել բույսի վարակումը, նրանցից պահանջում են բայց բարենպաստ ջերմությունից նաև մեծ խոնավություն (անձրև, ցող, մառախուղ): Այստեղից հասկանալի յե, վոր հաճախակի տեղումները կամ ցողը, զուգորդվելով տաք յեղանակին ուժեղացնում են ժանդի զարգացումը: Այսպես, 1933 թվի անձրևային տարին ամբողջ յերկրամասում նկատելի յեր ժանդի ուժեղ զարգացում, իսկ 1934 թվին, չնայած տերեւի թուխ ժանդի պաշարն աշնանից և վաղ գարնանից համեմատաբար մեծ եր Ազով-Սևծովյան և Հյուսիսային Կովկասի յերկրամասերում, բայց և այնպես ժանդի խիստ զարգացում նկատելի չեր միայն նրա համար, վոր նրա զարգացման սկզբնական շրջանում (ապրիլ-մայիս) յեղանակն յերաշտային եր, դրանով ել բացարձում ե նրա թույլ տարածումը Ազով-Սևծովյան և Հյուսիսային Կովկասի շատ ույզներում և նրա լիակատար բացակայությունը մի քանի ույզներում:

Բայոնսերը	1933 թ.		1934 թ.	
	Բույսերի վնասվածքը		տոկոսներով	
	Թուփի ժանդից	Ցողունի ժանդից	Թուփի ժանդից	Ցողունի ժանդից
Սալսկի . .	84	4—11,5	0	0
Կրասնոդարի	76	69	13,5—20,8	5,7—9
Յելսկի . .	100	—	1,4—2,2	3/4

Հյուսիսային Կովկաս  
Յողնային ծանօթից վնասվածքը տոկոսներով

Պրիկումսկի	46	0	0	0
Մոգդոկի . .	58	0	Առանձին բարձիկներ	0
Գեորգիևսկի	72	0	0 և առանձ. բարձիկներ	0

Բոլորովին այլ պատկեր եր ներկայացնում ժանդի զարգացումը 1933 թվին, յերբ մեծ քանակությամբ մթնոլորտային տեղումներ կային: Այդպես, բույսերի պաշտպանության Ազով-Սևծովյան հիստիտուտի տրվայիներով, կարելի յե հետևել ժանդի վնասման աստիճանի տարբերությունը 1933 և 1934 թվերին Ազով-Սևծովյան և Հյուսիսային Կովկասի մի քանի ույզներում:

## ԻՆՉԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ԾՈՐԵՆԻՆ ՅԵՎ ՄԱՄԽԻՆ ԺԱՆԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ինչպես վերևում նկարագրվեց ցորենի ցողնային ժանդը և վարսակի թագանման ժանդն ընդունակ են

զարգանալ միայն ծորենու և մամխու թփուտների դեպքում և տարեցտարի պահվել ձմեռային սաղմիկների ողնությամբ Դրա համար ել ծորենին և մամխին հանդիսանում են ժանդի այդ տեսակները գարնանանը ցանքսերի վրա փոխադրողները: Թե ինչքան մեծ ե ծորենու և մամխու թփուտների դերն այդ մակարույժ սունկերի զարգացման գործում, հայտնի յե հետեվյալից: Դանիայում և Անգլիայում ցորենի ցողունային ժանդը հասցնում եր մեծ վնասներ, ուժեղ կերպով իջեցնելով բերքը, իսկ յերբեմն ել բոլորովին վրչնչացնում եր նրանց, բայց ծորենու վրչնչացումից հետո այդ ժանդը բոլորովին փոշնչացավ: Նույն ձևով ել Ամերիկայի մի քանի նահագներում համարյա բոլորովին ազատվեցին ժանդի զարգացումից, դրա համար ել պակասեցին բերքի կորուստները: Որինակ, համաձայն ամերիկյան տվյալների յերեւում ե, թե ինչքան շահավետ ե ծորենու և մամխու թփերի վոչնչացումը:

#### Թերթի տարեկան միջին կորուստը ցենտուներուով

	Նահանգների անունը			
Մինեսոտա	Հյուսիսային Դաշտոտա	Հարավային Դաշտոտա	Ընդամենը 3 նահանգն.	
Եղորուստի պահանումը ծորենու հետացումից հետո . . .	2 034 500	6 478 950	2 362 150	10 875 600

Ալդալիսով յերեք նահանգներում վոչնչացնելով ծորենու թփերը, ժանդի հասցրած վնասներն իջել են 10 875 000 ցենտներ:

Արեվմայան Յեղորոպայի պետություններում — Շվեդիա, Իտալիա, Իսպանիա և մյուսները, վորտեղ չեն վոչնչացված այդ թփուտները, ժանդը մինչև այժմ

մեծ ավերմունքներ ե գործում դաշտերում: Ճիշտ այդպես ել մեր յերկրամասում և Հյուսիսային Կովկասում ծորենու և մամխու թփուտների աճելու պատճառով, ցողունի և թագանման ժանդերը սաստիկ տարածված են և խիստ իջեցնում են բերքն առանձին տարիներում: Նրա վնասարարությունը հատկապես արտահայտվում է Հյուսիսային Կովկասի հարավային և հարավ-արեվելյան մասում (Գեորգիյեվսկի, Մոգուլի, Վորոնցովո-Ալեքսանդրովսկի ույոններում և Կաբարդինո-Բալկարիայի ավտոնոմ մարզում և այլն), վորտեղ թերեք և կումա գետերի ափերում ընկած են ծորենու մեծատարած թփուտներ: Իսկ Աղով-Սեվծովյան յերկրամասում ցողնային ժանդը քիչ ե վնասում ցանքսերը: Դա բացատրվում է նրանով, վոր մեր յերկրամասում ծորենու թփերը համեմատաբար քիչ են: Այդպես, Հյուսիսային Կովկասում հայտաբերված ե ծորենու մինչեւ 1 200 000 թուփ, մինչդեռ Աղով-Սեվծովյան յերկրամասում Յերկրհողվարչության տվյալներով, նրանց քանակը մոտավորապես հասնում է 200 000 թփի, իսկ մամխունը մինչև 107 000 թփի: Ուայոններում այդ թփուտները հետեւյալ չափով են տարածված:

#### Հյուսիսային Կովկաս

Ուայոնները	Ծորենու թփերի քանակը
Գեորգիյեվսկի . . . . .	733 900
Պետրովսկի . . . . .	83 000
Վորոնցովո-Ալեքսանդրովսկի	70 000
Մոգուլի . . . . .	50 000
Ստավրոպոլի . . . . .	12 500
Հանքային Ջբերի . . . . .	10 000
Մեղքեժենսկի . . . . .	15 000

Բայոնները	Ծովենու թփերի քանակը
Ն.-Ալեքսանդրովսկի	15 000
Կուրսավակի	15 000
Զենյալի	10 000
Պյատիգորսկի	5 000
Պրիկումսկի	10 000
Նեվինոմիսկի	10 000
Իզաբիլնո Տիշչենսկի	10 000
Բլագոդարնենսկի	12 500
Կիսլովոդսկի	1 000
Յեսենտուկի	450
Հնդամենը	1 084 500

	Թփերի քանակը
Նագորնի	4 054
Նաչիկի	20 262
Պրիմալկինի	48 907
Բաքսանի	9 164
Ռոբանսկի	2 638
Հնդամենը Կաբար- դինո-Բալկարիայում	84 965

Ազով-Սևծովյան յերկրամասում հայտաբերված թփուտների մասին տվյալներ ունեն միայն 27 ռայոններ։ Մորենին ու մամլին ամենամեծ չափով տարածված են Լաբինսկու և Բելոբեչենսկի ռայոններում, 11 ռայոններում բոլորպին բացակայում են թփուտները, իսկ 14 ռայոններում քիչ են տարածված։

1933 թվին ցողնային ժանգից կրած ցորենի վընասվածքի չափն արտահայտվում եր հետեւյալ թվերով՝

### Հյուսիսային Կովկաս

		Ծովենու թփերի քանակը
Գեորգիեվսկի ռայոն	31,3—72,2%	733,900
Մողոնկի ռայոն	40,1—58%	50,000

### Ազով-Սևծովյան յերկրամաս

Բայոնների անունը	Ցանքսերի վնաս- գածքը առկաներով		Հայտաբերված են թփեր	
	Ցողնային ժանգից	Թագա- նանդից	Ծովենի	Մամի
Մեչետինսկի	4—12		Յեղակի թփեր	Բացակա- յում են
Մողոնովսկի	2,0	61	Բացակա- յում են	1424
Սալսկի	2,3		»	Բացակա- յում են

Մեջ բերած թվերը ցույց են տալիս, վոր ցողնային ժանգից վնասված ցանքսի ամենաբարձր աստիճանը սերտորեն կապված է թփերի ամենամեծ քանակին ռայոնում։

Իսկ ցողնային ժանգի զարգացումն այն ռայոններում, վորտեղ չկա ծորենի, բացատրվում է սաղմիկների տեղափոխում ժանգը ուժեղ զարգացած ռայոններից։ Ժանգի տարածման դործում մեծ դեր է խաղում և թփուտների տեղադրությունը։ Այսպես, հացաբույսերի համար մեծ վտանգ են ներկայացնում ծորենու և մամիսու թփերը, դասավորված բաց տեղերում և անտառների ծայրերում, մինչև 250—500 մետր խորությամբ դեպի անտառը։ Բացի այդ, մեծ նշանակություն ունեն և ցանքսերին մոտ գտնված թփուտները, վորոնք ազդում են ցանքսերի վնաս-

վածքի չափի վրա ցողնային և թագանման ժանդից:  
Սյու զբությունը կարելի յե ցույց տալ հետեւա  
թվերով, վորոնք ստացվել են 1933 թվին Գեորկիեսկի  
ռայոնը քննելիս Ա. Ֆ. Ռուսակովի բրիգադի կողմից:

Թփուտների աճման տեղից հեռու զանգելը	Ցողնային ժանդից վասպելու չափը տոկոսներով
1 — 2 կիլոմետր	52,2 — 61,1
2 — 4 »	49,1
10 — 20 »	47,4
40 — 43 »	30,2

Նույն բանը կարելի յե ասել վարսակի թագանը-  
ման ժանդի մասին:

Բայց լինում են դեպքեր, յերբ ցորենի ու վարսակի  
ցանքսերը հեռու գտնվելով ծորենու և մամխու բու-  
սած տեղից, ավելի ուժեղ են վասպում ժանդից, քան  
ավելի մոտիկ գտնված ցանքսերը: Սյու յերենոյթը բա-  
ցատրվում ե այդ կուլտուրաների ցանքի զանազան  
ժամանակներով, այն ե, ավելի ուշ կատարված ցանք-  
սերն ավելի ուժեղ են վարակվում, քան վաղ կա-  
տարված ցանքսերը: Սյու վարակելու գործությունը կատարված է 1933 թվին Մողոկի ռայոնում  
ցողունի ժանդից ստացած բերքի կորուսար ցանքի  
ժամկետերի համեմատ, փոխանակ սպասվող 10 — 12  
ցենտների, արտահայտվեց հետեւյալ չափով.

Հեռավորությունը ծորենուց	Ցանքի ժամկետերը	
	Սեպտեմբեր	Հոկտեմբեր
5 — 6 կիլոմետր . . .	5 — 6 ցենտներ	0,5 — 2 ցենտ.
6 — 10 » . . .	6 — 8 »	4 — 6 »

## ԽԶՊԵՍ ՊԱՅՄԱՐԵԼ ԺԱՆԳԻ ԴԵՄ

Պայմարի ագրուսեխնիկական սիցոցները: Բերքը  
ժանդի վարակումից պահպանելու համար անհրաժեշտ  
ե վոչնչացնել նրա տարածման ոջախները, վորոնք  
հանդիսանում են վարակման աղբյուր: Ցորենի տերե-  
վային թուլի ժանդի այդպիսի ոջախներ հանդիսանում  
են բերքի մնացորդները և թափած հատիկը, վորով-  
հետև մնկի սաղմիկները աշնանը նրանցից անցնում  
են աշնանացանի ծիլերի վրա, վորտեղ և ձմեռում են  
մինչև գարուն: Դեռ առաջներում տերևային թուլի  
ժանդի դեմ, վորպես պայքարի միջոց, հանձնարարվում  
եր բերքի մնացորդների և թափած հատիկի վոչնչա-  
ցումը, բայց քանի վոր այդ միջոցառումը պլանային  
բնույթ չուներ, միանգամայն ընական ե, վոր նրա  
արդյունքը քիչ եր: Սյու վարակելու բերքի մնացորդ-  
ների (ցողնատակի) և ընկած հատիկի անմիջական  
հարևանությունն աշնանային ցանքսերին, հանդիսա-  
նում ե վարակման ամենամեծ սպառնալիք: Դրա հա-  
մար նրանց պետք ե վոչնչացնել առաջին հերթին,  
այնուհետև անցնել ավելի հեռու ընկած ոջախների  
վոչնչացմանը: Ցողնատակը վոչնչացնում են այրելով  
կամ վարելով և ապա վաղ աշնանավար կատարելով:

Բերքը հավաքելու ժամանակ վորպեսզի հատիկ-  
ները չթափվեն, անհրաժեշտ ե կազմակերպված պայ-  
քարել հացահատիկի կորուսափ դեմ, մի բան, վոր լրիվ  
կազմականի բերքը և կազմականի ժանդի զարգացումը:  
Թափած հատիկը հայտնվելու դեպքում պետք ե վոչն-  
չացնել նրան վարելով:

Զմեռած ժանդը գարնանը հայտնվում ե ծիլերի  
տերևների վրա աննշան չափով. և ուժեղ կերպով  
զարգանում ե միայն տաք յեղանակ սկսվելով:

Ժանգի պաշարն աշնանացանքսերից կրծատելու համար անհրաժեշտ են նրանք փողխել վաղ գարնանը: Թույլ տերեների ու բույսերի մեծամասնությունը փողխելով մեռնում և չորանում են նրանց վրա գտնված ժանգը վոչնչանում են:

Աշնանացանքսերի տեղադրությունը գարնանացանքսերի կողքին ավելի ուժեղ կերպով են վարակում գարնան ցանքսերը ժանգով, փորովհետև մնկի սաղմիկներն անցնում են աշնան ցանքսերից: Դրա համար անհրաժեշտ է լրիվ պահպանել բույսերի ճիշտ ցանքսաշրջանառությունը և հերթականությունը: Ինչպես վերեւում նկատված է, միջանկյալ բույսերն ել կարող են ուժեղացնել տերեւային ժանգի զարգացումը, դրա համար նրանց պետք է վոչնչացնել ամենուրեք, փորտեղ պատահեն, վոչ միայն ցանքսերում յեղածները:

Յեվ այդպես, տերեւային ժանգի դեմ յեղած հիմնական միջոցները հետևյալներն են:

1. Բերքի մնացորդների (խոզան) և ընկած հատիկների վոչնչացումը կալերում և ճանապարհներին, այրելով կամ վարելով խոզանները, հետագայում ել աշնանավար կատարելով, առաջին հերթին անցկացնելով աշնանացանքսերին մոտիկ վայրերում և անպայման մինչև ցանքսի սկիզբը կամ մինչև ծլելը:

2. Աշնանային ցանքսերի փողխելը ժանը հողամասերում:

3. Գարնանացան բույսերը չցանել նույնանուն աշնանացան բույսերի անմիջապես կողքին:

4. Հատուկ ուշադրություն դարձնել մոլախոտերի, տերեփուկի, կարմրածաղկի, կորածաղկի և մյուսների վոչնչացման վրա:

Ժանգի բոլոր տեսակների, ինչպես տերեւային

թուլս ժանգի, այնպես ել ցողնային և թագանման ժանգի զարգացման վրա պակաս ազդեցություն չունեն և ցանքսի ժամկետերը: Աշնանային և գարնանային ցանքսերի ուշացած ժամկետերն ավելի ուժեղ են վնասվում ցողնային և թագանման ժանգից, ինչ վերաբերում են տերեւային ժանգին, նրանը ավելի պակաս չափով են վնասում գարնանային ցանքսերը, իսկ ավելի ուժեղ վնասում են վաղ աշնանացանքսերը, յեթե հարկան հողամասերում չեն վոչնչացած ընկած հատիկներն ու խոզանները: Այդ յերեւութը բացատրվում է նրանով, վոր ժանգը զարգանում է միայն բույսերի կանաչ և կենդանի մասերի վրա, իսկ վաղացան ցանքսերը ժանգի ամենաշատ զարգացման շրջանում նախ և առաջ տալիս են ավելի հասուն բույսեր, յերկրորդ, ավելի շատ են մեռնում կանաչ մասերը (հասունացման շրջան) ուշ ցանքսերի հետ համեմատած: Դրա համար վաղ ցանքսերը ազատվում են ժանգի ուժեղ վնասումից:

Իսկ տերեւային ժանգն ավելի ուժեղ է զարգանում վաղացան աշնանացանքսերի վրա, վորովհետև նրանց վրա նստում են դեռ կենսունակ ամառային սաղմիկները բերքի մնացորդներից ու թափած հատիկներից: Բայց քանի վոր մեր յերկրամասում ամենավնասակարը հանդիսանում է ցորենի ցողնաժանգը, ապա վաղ կատարված ցանքսերը հանդիսանում են ժանգի դեմ պայքարելու հիմնական միջոցը:

Ժանգի վնասը պակասեցնելու ամենաազդեցիկ և շահավետ միջոցը հանդիսանում է ժանգատոկուն բույսեր մացնելը: Գոյություն չունեն հացաբույսերի այնպիսի տեսակները, վորոնք տոկուն լինեն ժանգի բոլոր տեսակներին և միաժամանակ ունենան լավ հատկություններ ու բարձր բերք տան: Որինակ, մեր յերկ-

բամասում տերևային թուխ ժանգին դիմանում են հացաբույսի «Զարյա» կոչված տեսակը (Նեմերչանսկի փորձակայանում), սակայն այդ տեսակը պակաս բերք ե տալիս և իր վորակով զիջում ե մյուս շատ տեսակներին։ Կան տերևային թուխ ժանգին դիմացող տեսակներ, բայց նրանք ուժեղ կերպով վնասվում են ցողնային ժանգից։

Այդպես, Ազով-Սևծովյան յերկրամասում գարնանացան ցորենի ամուր տեսակները դիմանում են թուխ ժանգին, բայց վնասվում են ցողնային ժանգից։ Նույն բանը կարելի յե ասել մեր յերկրամասի աշնանացանի տեսակների մասին—«ուկրայինկան», «կոռավերատորկան», «գոստիանումն» իրենց բարձր հատկություններով հանդերձ ուժեղ կերպով վնասվում են ցողնային ժանգից։ Այդ բոլորից յերեւում ե, վոր ժանգի բոլոր տեսակներին դիմացող հացաբույսեր գոյություն չունեն մեր յերկրամասում։

Վերջին տարիներում Սելեկցիոն կենտրոնը (բույսերի տեսակներն ազնվացնող կազմակերպությունը) ստացել ե ցողնի ժանգին դիմացող տեսակներ, բայց ինկատի ունենալով նրանց հատիկների սակավությունը և այդ տեսակների մյուս հատկությունների անբավարար ուսումնասիրությունը, նրանք դեռ չեն կարող մասսայականացվել։ Այդպիսով ժանգատոկուն տեսակների բացակայությունն Ազով-Սևծովյան և Հյուսիսային կովկասի յերկրամասերում չի կարող լրիվ չափով վոչնչացնել ժանգի պատճառած վնասը։ Ներկայումս մակաբույժերի դեմ պայքարելու համար մենք պետք ե ոգտագործենք ագրոտեխնիկական և կազմակերպչական—անտեսական միջոցառումներ։

Ազրուելինիկական միջոցառումներն արդեն ցույց են տված, մնում ե թվել հատուկ միջոցառումները,

վորոնց մեջ ե մտնում ծորենու և մամխու վոչնչացումը, քանի վոր նրանք հանդիսանում են ցողնային և թագանման ժանգը ցանքսերի վրա տարածող միակ և հիմնական թփերը։

Թփուտները վոչնչացնելու համար գոյություն ունեն յերեք մեթոդներ—մեխանիկական, քիմիական և համադրական (կոմբինացիոն)։

Մեխանիկական մեթոդն այն ե, վոր թուփն արմատահան ե արվում իր բոլոր յերկրորդական արմատներով միասին։ Արմատահանման ժամանակ պետք ե հիմնովին հեռացնել բոլոր արմատները վոչ պակաս, քան 50 սանտիմետր խորությամբ, հակառակ դեպքում, կարող են նոր ծիլեր բումնել։ Այդ միջոցը պահանջում ե հատուկ ջանք և շատ աշխատանք։

Քիմիական մեթոդն այն ե, վոր թփի տակը լրցնում են զանազան քիմիական բաղադրություններ, վորոնք ծծվելով հողի շերտում, ջրի հետ միասին արմատների միջով թափանցում են բույսի մեջ և սպանում նրան։ Իր ներգործությամբ քիմիական մեթոդն ամենաազեցիկն ե։ Թփերի վոչնչացման համար գործածվող քիմիական նյութերից լավագույններն իրենց գործածության պարզությամբ և ներգործությամբ հանդիսանում են սովորական աղը\* և միշյակաթթունատրին։ Այդ քիմիական նյութերի ազդեցիկ և արագ ներգործությունը կախված է թփի մեծությունից, վորը խստորեն պետք ե հաշվի առնել նրանց վոչնչացման ժամանակ։

Բույսերի պաշտպանության Ազով-Սևվծովյան ինստիտուտի կատարած փորձերը ծորենու և մամխու

\* Ա.գելի հժան լինելու համար կարելի յե ժանգի դեմ պայքարել այսպես կոչված քարաղի միջոցով։

թփերի վոչնչացման վերաբերյալ թույլ են տալիս անել  
հետևյալ յեզրակացությունները:

Ժորենու համար

Թփի ցողունն արմատի մոտից ընդգրկելիս	Գետք և մացնել քիմիական բաղադրություններ	Մանրա- թյուն
Քարաղ	Միջակաթըթ- վային նատրի	Մանրա- թյուն
Մինչև 10 սանտիմետր (4 սանտիմետր տրա- մագծով) . . . . .	2 կիլոգրամ	150—200 գ.
10—20 սանտիմետր (4—7 սանտիմետր տրամագծով) . . . . .	4 կիլոգրամ	400 գ.
20 սանտիմետրից ավելի . . . . .	6—8—10 կգ.	500—600 գ.

Լուծողական մամխուն համար

Թփի ցողունն արմատի մոտից ընդգրկելիս	Գետք և մացնել քիմիական բաղադրություններ	Մանրա- թյուն
Քարաղ	Միջակաթըթ- վային նատրի	Մանրա- թյուն
Մինչև 10 սանտիմետր (4 սանտիմետր տրա- մագծով) . . . . .	2 կիլոգրամ	100 գրամ
10—20 սանտիմետր (մինչև 7 սանտիմետր տրամագծով) . . . . .	6 »	240 »
20 սանտիմետրից ավել (տրամագիծը 7 սանտիմետրից ավել) . . . . .	8—10 »	300—400 »

Քիմիական բաղադրությունների քանակի աղյու-  
սակից յերևում ե, վոր ծորենին վոչնչացնելու համար  
լավագույն քիմիական բաղադրությունը հանդիսանում  
ե աղը, իսկ մամխուն համար միշտակաթթու նատ-  
րին:

Յեթե վոչնչացման յենթակա թփերն աճում են  
այգիներում և պտղառու ծառերից գտնվում են յեր-  
եկու մետր հեռավորության վրա, իսկ անտառում ար-  
ժեքավոր ծառերից կես մետրի վրա, ապա քիմիական  
մեթոդն այդ գեպքում պետք ե փոխարինել մեխանի-  
կական մեթոդով:

Թփերի գեմ քիմիական պայքար տանելու լավա-  
գույն ժամկետը պետք ե համարել աշունը և գարունը  
ծորենու և մամխուն բողբոջներն ուղղելու ժամանակ,  
մինչև նրանց վրա տերևներ յերևալը, քանի վոր տե-  
րևներ յերևալու հետ միասին նրանց վրա հայտն-  
վում ե և ժանգը, վորը կարող ե վարակել ցանքերը:  
Միջին հաշվով թփերի հիմական մասսան վոչնչանում  
ե քիմիական բաղադրությունները թփերի տակը մըտց-  
նելուց 30 որ հետո:

Քիմիական բաղադրությունը լցնում են հավասա-  
րաչափ կերպով թփի տակը 10—15 սանտիմետր շա-  
ռավիկով: Աղը կամ միշտակաթթու նատրին շաղ տա-  
լուց հետո նրանց վրա հող են ածում, վորպեսզի կեն-  
գանիները չթունավորվեն:

Համալրական (կամբինացիոն) մեթոդ: Այդ մեթոդն  
այն ե, վոր սկզբում կտրում են թփի բոլոր ցողուն-  
ները, այնուհետև նրա հիմքի շուրջը լցնում են քի-  
միական բաղադրություններ, նույն ձևով, ինչ վոր քի-  
միական մեթոդի ժամանակ, բայց ավելի քիչ քանա-  
կությամբ:

Թփի ցողունն արմատի մոտից ընդգրկելիս	Պետք ե մոցնել քիմիական բաղադրություններ		Դանոթուն թվուն
	Քարաղ	Մեջակաթթու նասորի	
Մինչև 10 սանտիմետր (4 սանտիմետր տրա- մագծով)	1 կիլոգրամ	25—50 գրամ	
Մինչև 20 սանտիմետր (մինչև 7 սանտիմետր տրամագծով)	3 »	50—100 »	
20 սանտիմետրից ա- վել (7 սանտիմետրից ավել տրամագծով)	4 »	150—200 »	

Բոլոր մեթոդներից ամենաարդյունավետը հանդի-  
սանում ե քիմիականը, իսկ ամենապակաս արդյունա-  
վետը մեխանիկական մեթոդը:

### ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԾՈՐԵՆՈՒ ՅԵՎ ՄԱՄԽՈՒ ԹՓԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ԱՇԽԱՏՎԱՆՔՆԵՐԸ

Ինչպես մենք վերևում ցույց տվինք ծորենու և  
մամխու թփերի հիմնական մասսան պետք ե վոչնչաց-  
նել աշնանը կամ վաղ գարնանը մինչև տերեների յե-  
րեալը: Դրա համար նախ և առաջ անհրաժեշտ ե  
հաշվի առնել թփերի ընդհանուր քանակը, վորոնք  
գտնվում են ընակված վայրերում և յենթակա յեն  
վոչնչացման: Այդ բանը հայտաբերվում է թփուտներն  
ուսումնասիրելով ցանքսերի մեջ ընկած բաց տեղե-  
րում, այդինք ոգտագործման յենթակա անտա-  
ռային վայրերում, անտառների ծայրերում և տնկա-  
րաններում:

Այդ թփերը հայտաբերելու աշխատանքները ճիշտ  
տանելու համար բոլոր տվյալները զրի յեն առնում  
հատուկ հաշվառման տոմսի վրա հետեւյալ ձևով.

Տեղը (գետավիճակ ցանքերի մեջ, հանապարհների կողմէն և այլն)	Տանեանթյան անուններ	Թփերի անուններ	Թփերի քանակը		
			Բաց անելը	Օտառանների ծանչը	Օտառանների լուսնակը 150 անուն

Հաշվառումը կատարողի ստորագրությունը

Բոլոր թփերը հայտաբերելուց հետո անհրաժեշտ ե  
խսկույն անցնել նրանց վոչնչացմանը: Պետք ե մատ-  
նանշել, վոր թփերի վոչնչացումը պետք ե կատարվի  
ամբողջ ռայոնում, վորովհետև նրա վոչնչացումն ա-  
ռանձին տեղերում կարող ե զերոյի հավասարեցնել  
կատարած աշխատանքը, այն ե գարնանային սաղ-  
միկները, վորոնք գոյացել են վոչնչացված թփերի  
վրա, կարող են հացարույսերի ցանքսը վարակել ժան-  
գով և այդ վարակված բույսերը հետագայում կլինեն  
ամառային սաղմիկների տարածման աղբյուր մյուս  
ցանքսերի համար:

Թե թփերի ուսումնասիրության և թե նրանց վո-  
չնչացման գործին պետք ե ներկրագիր ամբողջ հա-  
սարակությունը (կոմյերիտմիությունը, պիոներները,  
դպրոցականները և այլն), իսկ պարտադիր կարգով  
ռայոնական հողբաժինները, ռայոնական անտառային  
տնտեսությունները: Թփերի հայտաբերման, ինչպես  
և վոչնչացման դեկավրությունն ու հսկողու-

Թյունը պետք ե կենտրոնացնել մի կազմակերպության ձեռքը:

Թփերը վոչնչացնելու ժամանակ պետք ե նրանց քանակը մացնել հաշվառման տոմսում, վորը նույն ձևի, ինչ վոր վերևում բերվածը, բայց պետք ե ցույց տալ վոչնչացման մեթոդը (քիմիական, համագրական կամ մեխանիկական): Այդպիսի տոմսը հանդիսանում է հսկողություն ձեռնարկած միջոցների հաշվառման և այդ միջոցների լրիվ կատարման համար:

Թփերը վոչնչացնելիս պետք ե նկատի ունենալ վոր յերկու տեսակ մամիսի գոյություն ունի. լուծողական մամիսի և փիրուն մամիսի: Իսկ վարսակը թագանման ժանգով վարակողը հանդիսանում է միայն լուծողական մամիսին, դրա համար ել անհրաժեշտ ե վոչնչացնել միայն այդ թուփը: Մեր յերկրամասում 1933 թվին յեղել են դեպքեր, յերբ լուծողական մամիսու փոխարեն վոչնչացրել են փիրուն մամիսին: Դրա համար ել ներքենում տրվում է այդ յերկու տեսակ-ների համառոտ նկարագրությունը:

Լուծողական մասմիսի (*նրան առում են նաև եպոստեր կամ փուշ*) մի թուփի ե 3—4 մետր, յերեմն ել մինչեւ 8 մետր բարձրությամբ: Նրա կեղեք թուխ գորշագույն ե, մատղաշ ճյուղերի վրա վողորկ, իսկ ծեր ճյուղերի վրա անողորկ: Կողքի ճյուղերը վերջանում են փշերով: Տերեները դասավորված են հաջորդական, յերեմն ել իրար հանդիման են զլանվում և ձվածն են, ծայրերը մանր ատամնավոր: Ծուրաքանչյուր տերև ունի 3—4 զույգ կողքի ջիղեր, վորոնք աղեղածն թեքված են դեպի տերերի ծայրը: Ծաղիկները դեղնականաչավուն են: Պտուղը սև գույնի յեսենի մեծությամբ 4 կարծր կտերով:

Փիրուն մամսին մի թուփ ե 4—5 մետր բարձ- րությամբ յերբեմն ծափի տեսք ե ընդունում: Կեղեկը թուփս գորշագույն ե սպիտակ բծերով: Կողքի ճյու- ղերը փշեր չունեն: Մատղաշ ճյուղերը թուփս կարմրա- վուն են, յերկարավուն վոսպիկներով, իսկ հետո գոր- շանում են: Տերեները դասավորված են հաջորդական ամբողջական յեղբերով, յերկարավուն ձվածե, սուր ծայրով: Ծաղիկները սպիտակ են, մանր: Պտուղներն սկզբում կարմիր են, իսկ հետո սևանում են:

Հատուկ ուշադրություն պետք ե դարձնել թե թփերի հայտաբերմանը և թե վոչնչացմանն Ազով-Սև- ծովյան յերկրամասում, վորն այդ ուղղությամբ մեծ ճեղքածքներ ունի, վորտեղ վոչ միայն չեն սկսել թփերի վոչնչացումը, այլև մինչեւ այժմ ուայնների մեծամասնությունը չի հայտաբերել ծորենու և մամ- խու առկայությունը և տարածվածության խտու- թյունը: Միայն լայն հասարակության մասնակցու- թյամբ, վորը պետք ե այդ աշխատանքները նախա- ձեռնի ու կազմակերպի, հսարավոր ե ձեռնարկվող միջոցները կատարել ավելի կարճ ժամկետերում և ազատել ցանքսերը ժանդի տված վասակց:

Պայքարի բիմիական միջոցները: Այդ միջոցների դեպքում բույսերը մշակում են փոշավոր թույ- ներով կամ թույների լուծույթով, կանխելու հա- մար ժանգի սունկի ուժեղ զարգացումը նրանց վրա: Ամենից լրիվ ուսումնասիրված ե ցանքսերը ծծմբա- փոշիով շաղ տալու պայքարի ձեր ժանգի դեմ: Ամե- րիկայի Միացյալ Նահանգների տվյալների համաձայն ծծմբափոշիով սրսկելը բարձրացնում ե բերքատվու- թյունը 2—3 անգամ չըսկված ցանքսերի համեմա- տությամբ, իսկ մեր տվյալներով՝ 40—50 տոկոս և ավելի: Դրական արդյունքներ ստանալու համար ցանք-

սերի սրսկումը ծծումքով կատարվում է միջին թվով  
7—8 անգամ և հանձնարարվում է սկսել ժամանդի  
առանձին բարձիկներ յերեալու մոմենտին և շարու-  
նակել հենց որը մի անգամ, մինչև մոմահասունության  
զրչանը, ամեն սրսկելուն ծախսելով 40 կիլոգրամ մի  
հեկտարի վրա։ Բայց ծծմբափոշիով սրսկելը ժամանդի  
դեմ պայքարելու համար լայն կերպով չի կիրառվում  
դեֆիցիտային լինելու պատճառով։ Վերջին ժամա-  
նակները հայտնվել են քիմիական նոր բաղադրու-  
թյուններ, վորոնք ծծնումքից քիչ են հետ մնում.—դր-  
բանք են ուլտրածծումը և կալցիտի ցիանամիտ, վորոնք  
արտադրական փորձի յեն յենթարկվում։ Հատկապես  
հեռանկարներ ունի ուլտրածծումը։

Այդպիսով ժամանդի դեմ պայքարելու գործում ուլ-  
տրածծումը կդորժադրվի ծծնումքին համահավասար,  
գերազանցելով նրանից իր ազգեցությամբ։



## ԲՅԱՆԿԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

Նախաբան . . . . .	3
Ինչ բան և հացաբույսերի ժամդը . . . . .	5
Ի՞նչ տեսակ են լինում ժամդերը և ինչով են նրանք տարբերվում . . . . .	8
Ինչպես և զարգանում և տարածվում ժամդը . . . . .	14
Ինչ պայմաններում և զարգանում ժամդը . . . . .	19
Ինչ նշանակություն ունեն ծորենին և մամլին ժամդի զարդացման գործում . . . . .	21
Ինչպես պայքարել ժամդի դեմ . . . . .	27
Ինչպես կազմակերպել ծորենու և մամլու թփերն ուսումնակրելու աշխատանքները . . . . .	34

Ответ. редактор Г. Потенц.

Тех. редактор О. Тер-Давыдов

Издание 13|4273. Об'ем 1,75 п. л. Статформат Е6 125x176. Упаковка картон 10—11403  
Тираж 870. Заказ 183. Сдано в производство 10|I 1935 г. Подписано к печати  
15|II 1935 г.

Типография им. Стасик 1902 г. АЧПТ в Ростове на Дону.

ԸՆԿ. ԸՆԹԵՐՑՈՂ.

Հայսնեցեք ձեր կարծիքը այս գրքի մասին  
նետելիալ հասցեով.

Г. Ростов-Дон, Буденовский 30,  
Азово-Черноморское Краевое Книго-  
издательство, армянская секция

Նամակները կարելի յե ուղարկել առանց  
նամակադրումի:

«Ազգային գրադարան»



NL0287403

ԳԻՐԱ  
Цена 25 ԿՈՊ.  
КОП.

17860  
43081-

На армянском языке

Р. И. КИКОИНА

РЖАВЧИНА ХЛЕБОВ  
И МЕРЫ БОРЬБЫ С НЕЮ

АЗОВО - ЧЕРНОМОРСКОЕ  
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО  
Ростов н-Д., Буденновский пр., № 30.

Գ Բ Ա Գ Ա Հ Ե Ս Ը  
Ուստավ-Դու, Մոսկովյան, № 53  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)